Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
հոկտեմբերի 5-ի N 1696 - Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԹՈՒՄՈ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿՆՔՎՈՂ ԳՈՐԾԱՐՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Գույք նվիրաբերողը	ՀՀ Արարատի մարզ, Մասիս համայնք
Սեփականության իրավունք ձեռք բերողը (նվիրառու)	Սիմոնյան կրթական հիմնադրամ
Նվիրաբերման պայմանագրի կնքման ժամկետը	Հողամասը նվիրաբերող մարմնի կողմից որոշումը կայացնելուց հետո 10-օրյա ժամկետում
Հողի սեփականության իրավունքների փոխանցում	Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման պահից
Նվիրաբերման պայմանագրի կնքման և գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարվում են	Սիմոնյան կրթական հիմնադրամի միջոցներով:
Կողմերի պարտավորությունները	1. Նվիրաբերողը պարտավորվում է՝ 1) նվիրառուին տրամադրել երրորդ անձանց իրավունքներից, փաստացի տիրապետումից ազատ հողամաս. 2) իր լիազորությունների շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նվիրառուին տրամադրել Թումո ստեղծարարական կենտրոնի կառուցման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ բոլոր թույլտվությունները: 2. Նվիրառուն պարտավոր է՝ 1) հողամասն օգտագործել բացառապես Թումո կենտրոն կառուցելու նպատակով. 2) պայմանագիրը կնքելու պահից երեք տարվա ընթացքում, առնվազն 400.000.000 /չորս հարյուր միլիոն/ դրամի բարեգործական ծրագրի շրջանակներում կառուցել Թումո ստեղծարարական կենտրոն, ժամանակակից կահավորմամբ, որը պետք է սպասարկի շաբաթական 2300 երեխա.

	3) բացառել իր կողմից նվիրաբերման կարգով ձեռք բերված հողամասի օտարումը, գրավադրումը, վարձակալության կամ օգտագործման տրամադրումը, կամ այլ ձևով ծանրաբեռնումը:
Կողմերի պատասխանատվությունը	Կողմերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պատասխանատվություն են կրում պայմանագրի պայմանների խախտման համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

05.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ